## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025թ. /նոյեմբերի 18, ժամը՝ 15:00, Հրազդան քաղաք

օրակարգ՝

«Էդգար Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի, Լանջաղբյուրի բազալտների հանքավայրի ընդերքօգտագործման թափոնների վերամշակում

2025թ. /նոյեմբերի 18, ժամը՝ 15:00-ին, Հրազդան համայնքի ղեկավարի նստավայրում կայացավ «Էդգար Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված Լանջաղբյուրի բազալտների հանքավայրի ընդերքօգտագործման թափոնների վերամշակման կայանքի /ՁՏԿ/ աշխատանքների վերաբերյալ հանրային երկրորդ լսումը, որը օրենքով սահմանված կարգով ներկայացրեց ՇՄ նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Շ. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին համայնքապետարանի աշխատակիցները, համայնքի ղեկավարի տեղակալը, նախաձեռնող ընկերության ներկայացուցիչները, «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի մասնագետները:

Վերջինիս կողմից ներկայացվեց Նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՇՄՆ և շահագրգիռ այլ կառույցների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, լրամշակման ներկայացման օրենսդրական ընթացակարգերը, նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա սպասվող հիմնական ազդեցությունները ՁՏԿ-ի աշխատանքի ընթացքում:

Ներկայացվեցին հարցադրումներ կապված՝ տարածքում ծառատնկման շերտի ստեղծման հետ, ՁՏԿ-ի նախագծման թույլտվության տրամադրման հետ, մակաբացման ապարների ՁՏկ տեղափոխման և օգտագործման հետ կապված: Բոլոր հարցերին տեղում տրվեց պարզաբանումներ :

Համայնքի ներկայացուցիչները նշեցին իրենց դրական ակնկալիքների մասին սոցիալական պարտավորությունների մասով: Հանրային լսումն անցավ արդյունավետ քննարկման մթնոլորտում, քննարկման մասնակիցների կողմից արտահայտվեցին

նախատեսվող գործունեությանը՝ բոլոր պարտավորությունների կատարելու չխարտելու պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շ.Կարապետյան

«Էդգար մայնինգ » ՍՊԸ Լ/Ա Գ. Հակոբյան